ռավարութեան հայրական հոգածութիւնը» դրուատելու համար եւ ապա՝ ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ պատերազմի անյաջողութիւնից գազանացած վրացական իշխանութիւնը կանգ չէր առնում մինչեւ անգամ մարդկանց լռելու իրաւունքը բռնաբարելու խայտառակութեան առաջ...

Պէտք է աւելացնել նաեւ, որ այդ օրերին ոչ միայն Վրաստանի հայերի, այլ եւ օտարացեղ դեմոկրատ տարրերի համակրանքն էլ Հայաստանի կողմն էր: Որովհետեւ եթէ նրանք ամէնքն էլ չգիտէին, թէ Ժորդանիայի կառավարութիւնը ի՛նչ պայմաններում եւ ի՛նչ պայմաններով էր գրաւել Հայկական Բորչալուն, որի համար զէնքեր էին ճօճւում, յամենայն դէպս ամէնքն էլ գիտէին, որ այդ դաւառում վրացիներ չկային, եւ որ վրացական զօրքերի դիմաց, առաջին գծերի վրայ, հայ զիւղացիներն էին կանգնած: Այս հանգամանքը, ինչպէս հաւաստացնում էր մեզ Զուլեին Պոլսի բանակցութիւնների ժամանակ, չափազանց ճնշիչ տպաւորութիւն էր թողնում մինչեւ անգամ վրացական շատ շրջանակների վրայ:

Արդ, այսքա՞ն բնական, այսքա՞ն հիմնաւորուած մի համակրանք, որ Վրաստանի հայերն ունէին դէպի Հայաստանը, կարո՞ղ էր պատճառ նկատուել նրանց դէմ հալածանքներ սկսելու: Ի հարկէ ոչ: Նա չէր կարող պատճառ նկատուել ոչ միայն Ժորդանիայի կառավարութեան համար, որ դեմոկրատական եւ մինչեւ անգամ սոցիալիստական հովեր ունէր, այլ եւ մի սովորական բուրժուական կառավարութեան համար, որ մարդկայնօրէն ընդունակ է մարդկային տրամադրութիւնները ըմբռնելու:

Այլ բան է, եթէ այդ համակրանքը պատերազմի ժամանակ արտայայտուի գործնական ձեւով՝ վնասելով երկրի իշխանութեանը կամ նրա բանակին եւ, ընդհակառակը, օգնելով հակառակորդ կողմին: Այս դէպքում եթէ դեմոկրատիկ եւ սոցիալիստական կառավարութիւնը որոշ տատանումներ էլ ունենայ՝ բուրժուական կառավարութիւնը ոչ մի տատանում չի ունենայ իր լախտի հարուածը իջեցնելու, անգամ եթէ դիմացը մի ամբողջ ժողովուրդ կանգնած լինի: Բայց կարո՞ղ են «պատերազմական անհրաժեշտութեան» մասին խօսողները մատնանշել մի հատիկ փաստ, մի հատիկ ակտ, որ դար ապացուցանելու, թէ Վրաստանի հայկական զանգուածը այնպիսի ընթացքի մէջ է եղել, այսինքն՝ գործնական աջակցութիւն է ցոյց տուել Հայաստանին կամ խանգարել վրաց կառավարութեան եւ նրա զօրքի առաջադրութիւնները:

Վճռականապէս պնդում ենք՝ չեն կարող:

Զենք ժխտում, որ Հայկական Բորչալուի հայ գիւղերը, որոնք պատերազմից յետոյ էլ մնացին վրացական իշխանութեան տակ՝ հէնց սկզբից Լոռուայ ապստամբների հետ էին: Եւ քանի որ խօսքը պատերազմի մասին է, թէկուզ եւ անարդար պատերազմի՝ թերեւս կարելի լինէր աչք գոցել, որ վրաց կառավարութիւնը խիստ միջոցների դիմեց այդ գիւղերը հնազանդութեան մէջ պահելու համար՝ պայմանով, ի հարկէ, որ այդ խստութիւնները չհասնէին մինչեւ անմեղ մարդկանց թալանելը եւ կանանց բռնաբարելը: Զենք ժխտում նմանապէս, որ բուն Վրաստանում էլ կարող են եղած լինել անհատ հայեր, որոնք թշնամական, մինչեւ իսկ դաւաճանական գործեր կատարած լինին վրաց կառավարութեան եւ զօրքի դէմ — թէպէտեւ կարծում ենք, որ եթէ այսպիսի անհատներ լինէին՝ դաւաճանութեան դէմ հրատարակուած օրէնքը կը գործադրուէր նրանց վերաբերմամբ, եւ հանրութիւնը կ'իմանար դաւաճան հայերի եւ նրանց գործերի մասին: Բայց այս բոլորով հանդերձ նորից պնդում ենք, որ Վրաստանի հայկական զանգուածը եւ յատկապէս այն զանգուածը, որ հարիւրներով ու հազարներով որսւում էր Թիֆլիսի փողոցներում, յօդուտ Հայաստանի եւ ի վնաս Վրաստանի ոեւէ ակտ, ոչ յղացել է եւ ոչ էլ կատարել:

Վրաստանում գտնուած մեր քաղաքացիները խիստ հրահանգ էին ստացել՝ թէ՛ Թիֆլիսում եւ թէ՛ այլ վայրերում կատարելապէս չեզոք մնալ պատերազմի հետ կապուած գործերում եւ միանգամայն լոյեալ դիրք պահել երկրի իշխանութեան հանդէպ: Այդ հրահանգը տուել եմ ես, Թիֆլիսի մեր դիւանագիտական ներկայացուցչութեան միջոցով, Բաթումից, ուր գտնւում էի պատերազմի սկզբին,